# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

**ՈՐՈՇՈՒՄ N 209-Ա**

**«26» ՀՈՒՆԻՍԻ 2024Թ**

**ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ «ՄԱՐՏԻՐՈՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԵՐՋԱՆԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի, 218-րդ հոդվածի 1-ին մասի, 220-րդ հոդվածի 1-ին մասի, 222-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 224-րդ և 226-րդ հոդվածների, 227-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-մասի 4-րդ կետի, «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 16-րդ մասի 22-րդ կետի, 17-րդ մասի, դրույթներով, հիմք ընդունելով «ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի 216-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի «1. Տնօրեն՝ հանրակրթական ուսումնական հաստատության» բաժնի 1-ին կետի 14-րդ ենթակետը, Ե. Մարտիրոսյանի հետ 2018 թվականի մայիսի 24-ին կնքված թիվ 437 աշխատանքային պայմանագրի 8-րդ կետը և անհիմն համարելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի հունիսի 21-ի թիվ 01/15/4099-2024 գրության հիման վրա Ե. Մարտիրոսյանի 2024 թվականի հունիսի 24-ի թիվ 31 գրությամբ ներկայացված գրավոր բացատրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

**1.** Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու՝ այդ թվում՝ գնումների կազմակերպման գործընթացը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 79-Ն հրամանով հաստատված հավելվածի պահանջների խախտմամբ իրականացնելու, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի համաձայն աշխատողներին խրախուսելու իրավասությունը գործատուին վերապահված լինելու պարագայում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության կազմակերպության՝ ՀՀ

Վայոց ձորի մարզի «Մարտիրոսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենին (գործատու՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետ) դրամական պարգևատրում տրամադրելու համար ՀՀ Վայոց ձորի մարզի «Մարտիրոսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ե. Մարտիրոսյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ կիրառելով «նկատողություն» կարգապահական տույժը:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ե. Մարտիրոսյանին ծանուցելու հաջորդող օրվանից:

**3.** Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

**Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ**

**ք. Եղեգնաձոր**